ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2024

ALL RIGHTS FOUNDATION

2024 Ծրագրեր

- «Բարեվարքության դեսպանները Հայաստանում [2.0]»
- Հզորացնելով կանանց. թվային պաշտպանություն ատելության խոսքի դեմ
- Վիզուալիզացնելով թվային աշխարհը
- Շիրակի քաղաքական ակումբ

Բարեվարքության դեսպանները Հայաստանում [2.0]»

Նպատակը՝

Նպաստել մանկավարժների և աշակերտների կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման բարձրացմանը, կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականությանը և բարեվարքության խթանմանը, հնարավոր վարքագծային փոփոխություններին և կոռուպցիայի դեմ պայքարում շահառուների դերի և նշանակության բարձրացմանը:

Նպաստել կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության վերաբերյալ կրթությանը՝ մշակելով կրթական ռեսուրսներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ և ինտերակտիվ նյութեր՝ դրանք կիրառելով դպրոցական բարեվարքության ակումբներում:

Աջակցող	Հայաստանի Բարեվարքության Ծրագիր (ՀԲԾ)
Դոնոր	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ)
Տևողություն	25.01.2024-25.11.2024
Բյուջե	$40,000.00

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2024

- Ուսումնական մոդուլի մշակում հատուկ փորձագիտական խմբի կողմից և շահառու կրթական հաստատությունների մանկավարժների եռօրյա վերապատրաստում:
- ՀՀ 8 դպրոցներում Բարեվարքության ակումբների հիմնադրում, գործունեության իրականացում:
- Նախագծային կրթական և ուսումնամեթոդական ռեսուրսների շահերի պաշտպանություն և հաղորդակցություն գործընկեր գերատեսչությունների հետ:
- Հակակոռուպցիոն կրթության հանրային իրազեկման սոցիալական մեդիա արշավի իրականացում:



Սոցիալական մեդիայում՝

- Արդարադատության նախարարության հետ համագործակցությամբ իրազեկման արշավի իրականացում
- Ծրագրի բովանդակային-կրթական հրապարակումների, Ծրագրի և Հայաստանի Բարեվարքության ծրագրի տեսանելիության հրապարակումների շարք:

Social Media	Project period
Reach (social media)	110.232
Like (social media)	1344
Views (only for Telegram)	67.507

ՀԶՈՐԱՑՆԵԼՈՎ ԿԱՆԱՆՑ.

ԹՎԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ

Նպատակ՝

Ստեղծել ներառական և ավելի անվտանգ թվային միջավայր կանանց համար, հատկապես նրանց, ովքեր հանրային դերերում են՝հասցեագրելով և մեղմացնելով առցանց ատելության խոսքը՝կանանց հզորացման միջոցով, ներառյալ նրանց կարողությունների զարգացումը, քաղաքականության փոփոխությունների վրա և կարծրատիպերի դեմ պայքարի նկատմամբ ազդեցության մեծացումը:

Աջակցող	ՕքսեՋեն հիմնադրամ
Դոնոր	Եվրոպական միություն
Տևողություն	01.02.2024-31.07.2024
Բյուջե	€20,000.00

Հետազոտություն

Արդյունքներ՝

ԲՀՀԻ հիմնադրամի մասնագիտական թիմը զարգացրել է իր ներքին կարողությունները սոցիալական մեդիա մոնիթորինգի ոլորտում՝ միջազգային փորձագիտական աջակցության, վերապատրաստումների, ինչպես նաև առցանց և անցանց հետազոտությունների իրականացման միջոցով:

Իրականացվել է հանրային իրազեկվածության արշավ կանանց նկատմամբ առցանց ատելության խոսքի մասշտաբների և ազդեցության վերաբերյալ:

Բարեփոխված քաղաքականություններ շահերի փաստահեն պաշտպանության արդյունքնում:

Վիզուալիզացնելով թվային աշխարհը



Ծրագրի նպատակն է նպաստել Գյումրի քաղաքի 16-22 տարեկան երիտասարդների մեդիագրագիտության և կիբեռանվտանգության մասին իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև զարգացնել քննադատական մտածողության և տեղեկատվության վերլուծության հմտությունները՝ թվային տեխնոլոգիաների պատասխանատու և անվտանգ օգտագործման համար:

Աջակցող	Կոնրադ Ադենաուեր Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղ
Դոնոր	Եվրոպական Միություն
Տևողություն	01.04.2024-31.08.2024
Բյուջե	1,750,000.00 ՀՀ դրամ

Արդյունքներ՝

- Շահառուների չորս խմբերի հետ իրականացվել են մեդիա և թվային գրագիտության զարգացման դասընթացներ՝ ընդգրկելով շուրջ 48 երիտասարդ:

- Իրականացվել է առցանց հանրային իրազեկման արշավ՝ վիզուալիզացված թերթերի կիրառմամբ:

Շիրակի քաղաքական ակումբ

Ծրագրի նպատակն է Հայաստանի սահմանամերձ մարզերում հիմնել քաղաքական քննարկումների մշտական մարզային հարթակներ՝ միտված տեղական քաղաքացիական հասարակության հզորացմանը և արդյունավետ քաղաքական երկխոսության մեջ ներգրավմանը: Ծրագրի սպասված արդյունքներից է մարզային բնակչության շրջանում պետական քաղաքականության տարբեր հարցերը վերլուծելու և քննարկելու մշակույթի ձևավորումը:

Աջակցող	Կովկասի ինստիտուտի հիմնադրամ
Դոնոր	Նիդերլանդների թագավորության կառավարություն
Տևողություն	01.09.2024-15.12.2024
Բյուջե	1,184,000.00 ՀՀ դրամ

Արդյունքներ՝

Շիրակի մարզում հիմնվեց Շիրակի քաղաքական ակումբը, որն ունեցավ 6 հանդիպում, որոնց ընթացքում քննարկվել են տարբեր ոլորտներին առնչվող հարցեր:

Այս քննարկումներին բանախոսում են երևանից ժամանած պատգամավորներ, պետական պաշտոնյաներ, կուսակցական գործիչներ, քաղաքացիական ծառայողներ, քաղաքացիական հասարակության դերակատարներ, լրագրողներ և վերլուծաբաններ: